ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 20-Լ

«17» 03 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 70 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի N 92 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N 70 հրամանի (այսուհետ՝ Հրաման)՝

1) 1-ին կետի 25-րդ ենթակետով հաստատված N 25 հավելվածի՝

ա) 7-րդ կետի 6-րդ ենթակետում «իրավասության շրջանակներում» բառերից հետո «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով:

բ) 7-րդ կետը՝ լրացնել նոր 7-րդ և 8-րդ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

«7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության լիարժեք և արդյունավետ իրականացման իրավական ապահովում.

8) Դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակվող իրավական ակտերի նախագծերի՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ապահովում:»:

2) Հրամանի 1-ին կետի 25-րդ ենթակետով հաստատված N 25 հավելվածի՝

ա) 8-րդ կետի 12-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«12) աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության իրավական կազմակերպում, իրավական և մեթոդական օժանդակություն.»

բ) 8-րդ կետը լրացնել նոր 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

«13) Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող՝ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրում և դրանց բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում.

14) այլ պետական մարմինների կողմից աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների վերաբերյալ ստացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և դիտարկումների ներկայացում.

15) ըստ անհրաժեշտության՝ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ փորձագիտական եզրակացության տրամադրում.

16) Գլխավոր դատախազի և նրա տեղակալների ստորագրմանը ներկայացվող փաստաթղթերի, հրամանների և այլ իրավական ակտերի նախագծերի խմբագրման և սրբագրման, միասնական իրավաբանական լեզվի եզրույթների մշակման աշխատանքների իրականացում:»:

3) Հրամանի 1-ին կետի 22-րդ ենթակետով հաստատված N 22 հավելվածի՝

ա) 10-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերը ճանաչել ուժը կորցրած,

բ) 10-րդ կետի 6-րդ ենթակետում «այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը» բառերը փոխարինել «այլ իրավական ակտերի նախագծերի» բառերով,

գ) 10-րդ կետը լրացնել նոր 6.1 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«6.1) Գլխավոր դատախազի, Գլխավոր դատախազի տեղակալների և Գլխավոր քարտուղարի՝ Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի նախապատրաստում.»

դ) 16-րդ կետի 1-ին, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 22-րդ ենթակետերը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, դատախազությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ